


# ՊԱՏՄՎԳԻՏԱԿԱՆ



ԷԴՈՒԱՐԴ ԴԱՆԻԵԼՅԱՆ

## ԱՍՏՎԱԾ ԱՆՈՒՆԸ ՎԱՂՄԻԶՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅ ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆԱԿԱՆ ՄՏՔԻ ՄԵԿՆՈՒԹՅԱՄԲ

Վաղ միջնադարյան աստվածաբանության մեջ կարևորագույն խնդիրներից եր Աստծո անվան բնութագրումը: Խնդիրը լուսաբանվել է Աստծո եկեղեցով Սորք Երրորդության հոգիներակալման քրիստոսաբանական սկզբունքով, որի հիմքումն է Հիսուս Քրիստոսի պատվիրանը իր աշակերտներին: «Գնացէք այսուհետեւ, աշակերտեցէք զամենայն ჩեթանոս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդոյ և Հոգոյն Սրբոյ»<sup>1</sup>: Ինչպես Պողոս և Հովհան առաքյալներն են մեկնել՝ «... Եկեղեցի Աստուծոյ կենդանոյ, սին և հաւատատութիւն ճշմարտութեամ: Եւ յայտնի իսկ մեծ է խորհուրդն աստուածպաշտութեամ, որ երեւեալ մարմնով, արդարացաւ Հոգով, յայտնեցաւ ჩիեցտակաց, քարոզեցաւ ի հեթանոս, հաւատարիմ եղեւ յաշխարին և վերացաւ փառօք<sup>2</sup>... Տէր Հոգին է. ուր Հոգի Տեան է, անդ ազատութիւն է»<sup>3</sup>: «Եւ զիտեմք, եթէ Որդին Աստուծոյ եկն, և ետ մեզ միտս զի ծանիցուք զճմարիտն. և եմք ի ճշմարտին Որդոյ նորա Յիսուսի Քրիստոսի, զի նա է ճշմարիտ Աստուած և կեանք յափտենական»<sup>4</sup>:

Սորք Երրորդության հության մասին Հավատամքում տրված հոգևոր ընկալումը՝ «... Աստուած յԱստուծոյ, Լոյս ի Լուայ, Աստուած ճշմարիտ՝ յԱստուծոյ ճշմարտիտ...»<sup>5</sup>, Ս. Գրիգոր Լուսավորիչը (239-326) «Յաճախապատում»-ի<sup>6</sup> մեջ մեկ-

<sup>1</sup> Մատթ. Ի. 19-20:

<sup>2</sup> Ա. Ցիմ. Գ. 15-16:

<sup>3</sup> Բ Կորմ. Գ. 17:

<sup>4</sup> Ա. Ցով. Ե 20:

<sup>5</sup> Քրիստոնեական, «Գալաձասար», Երևան, 1994, էջ 13:

<sup>6</sup> Ս. Գրիգորին «Յաճախապատում»-ի ჩեղինակ Բամարողների (Պատմութիւն ժողովոց Հայա-

Անդ է. «Խակին անձնի զէն անսկիզբն ծնեալ, մշտնչեմատրութեամն անսահմանի՝ զճշմարտութիւնն անփոփոխ ծնեալ, կենացն կենարարաց զկեանս կենաստու ծնեալ. լուսոյն կենանույ՝ զկենանի լոյսն կուսածին ծնեալ, Արարչին զԱրարիչն ծնեալ»<sup>7</sup>:

Ելից գրքի Գ 14 տաճ՝ «Ես եմ Աստուած Որ Էն» հայերեն թարգմանությունում նշված Աստված բառը չկա Սուրբ Գրքի երրայերեն, Բունարեն և ասորերեն լեզուներով տեքստերում: Ուստի մեր Սուրբ Թարգմանիչներն այն գրել են՝ զգալով պատիսի մեկնողական բացատրության անհրաժեշտությունը: Այստեղից հետևում է, որ Արարիչ Աստծո անունը հայ պատմագիտական և հայրախոսական երկերում ընկալվել է որպես Աստուած:

Ելից գրքի Գ 14-ի հայերեն թարգմանության ոգով է Ս. Գրիգոր Լուսավորիչը գրել «Թաճախապատում»-ի մեջ աստվածային էության մասին. «Մովսէս նոտերիմ ծառայ Աստուծոյ զԵութիւնն քարոզեաց մեզ և զկատարեալ գիտութիւն իսկ յԱստուծոյ: «Ես եմ, ասէ, Աստուած Որ Էն»: Եւ այսպէս սփոնեաց յարարածս զլոյս աստուածային էութեամն»<sup>8</sup>:

Աստվածաշնչի գրաբար՝ հայերեն թարգմանության ժամանականերին մոտ կանգնած Եղիշեն (V դ.) այդ ոգով տվել է հետևյալ մեկնաբանությունը. «... զէն Աստուած, որ ի մարդ կերպարանեցաւ...»<sup>9</sup>: Այստեղ նա ելել է Ելից գրքի հայերեն

տանեայց Եկեղեցւոյ համերեք կանոնադրութեամբ, աշխ. Ա. արք. Մխիթարեանցի, Վաղարշապատ, 1874, էջ 23, Մ. արքապիսկոպոս Օրմանեան, Ազգապատում, Բ. Ա. Կոստանդնուպոլիս, 1912, էջ 114) փաստարկն է՝ մրա գրած կանոններից մեկի վրայի ծանությունը. «Սահմանադրութիւն կարգաց ընկալեալ ի անհատավէն տեսանմէ Գրիգորի թարգմանեցաւ ի ձեռն Եզրկայ, հրամանաւ երանելոյն ուստի և որոշման վաճաց» (Պատմութիւն ժողովոց, էջ 25, Կանոնագիրը Հայոց, Բ. Ա. աշխ. Վ. Հակոբյանի, Երևան, 1964, էջ 625), իսկ Ս. Մեսրոպ Մաշտոցին հեղինակ համարողների («Հայկական աշխատասիրութիւնը հայագետն Պ. Ֆանտերի», թարգմ. 8. Տաշեան, Վիեննա, 1895, Մ. Արենյան. Հայոց Բին գրականության պատմություն, Բ. Ա. Երևան, 1944, էջ 119-120, Հայ ժողովրդի պատմություն, Բ. Բ. Երևան, 1984, էջ 444) Կորյունի մի հաղորդումը. «Ապա յետ այնորին դարձեա՛ այմակիսի առաւել և բարձրագոյն վարդապետութեամբն սկսեալ երանելոյն Մաշտոցի ճանս յաճախագոյնս, դիրապատում, շնորհագիրս, բազմահիմն ի լուսատրութեամբ և ան ի հիւթոյ գոյց մարգարէականաց կարգել և յօրինել, ի ամենայն ճաշակոր աւետարանական հաւատոյն ճշմարտութեան» (Կորյուն. Վարք Մաշտոցի: Բնագիրը, թարգմանությամբ, առաջարանով և ծան. ի ձեռն Մ. Արենյանի, Երևան, 1941, էջ 78): Ըստ Մ. Օրմանյանի, Ս. Գրիգորը «Թաճախապատում» գրել է հունարեն: Ուրեմն, կարեի է ասել, որ դրա թարգմանությունը կատարել և խմբագրել է Մեսրոպ Մաշտոցը Տիեզերական Եկեղեցու առաջին երեք ժողովների ոգով:

<sup>7</sup> Սրբոյ Հօրն մերոյ Երանելոյն Գրիգորի Լուսաւորչի Թաճախապատում ճառը լուսաւոր, Մայր Առող. Սրբոյ Էջմիածնի, 1894, էջ 1: Հմմտ. Mxitar Sasneci's Theological Discourses. Translated by S. P. Cowe. – Corpus Scriptorum Christianorum Orientalium, vol. 542-543, Scriptores Armeniaci, t. 21-22, Lovani, 1993, I. 3:

<sup>8</sup> «Թաճախապատում», էջ 23: «Թաճախապատում»-ի թարգմանությունը ընթացել է Աստվածաշնչի հայերեն թարգմանությամը զուգամեռ, ինչի վկայությունն է «Ես եմ Աստուած Որ Էն» արտամայտության առկայությունը Ել. Գ 14-ի և «Թաճախապատում»-ի հայերեն տեքստերում:

<sup>9</sup> Եղիշէի Վասն Վարդամայ և Հայոց պատերազմին, ի լոյս ածնալ բաղդատութեամբ ձեռագրաց

թարգմանության առանձնահատկությունից (ինչը արտացոլվել է նաև Եսայի մարդարնի գործից կատարված թարգմանությունում). «Ես Տէր Աստուած, այս է անոն իմ, զիկառու իմ այլում ոչ տաց, եւ ոչ զքաջութիւնս իմ դրօշեղոց», «Ես եմ առաջին, եւ Ես եմ յաւիտեան.... Ես եմ Տէր Աստուած...»<sup>10)</sup> և դրա հիման վրա կատարված քիստոսաբանական մեկնությունից: Եղիշեն ունի նաև «Ես եմ, ես եմ...» արտահայտությունը: Եղիշեն հայ աստվածաբանական մտքին բնորոշ ոգով տվել է Աստծո անվան բնութագիրը՝ «Ոչ սկիզբն առեալ յումերէ լինել Աստուած, այլ ինքն ինքեամբ մշտանշեամատոր, ոչ ի տեղուց որեք, այլ ինքն ինքեան տեղի. ոչ ի ժամանակի իմիք, այլ ժամանակը ի ամանէ գոյացան... Եւ անոն նորա Արարիչ երկնի և երկրի. իսկ յառաջ քան զերկին և զերկիր, որպէս ինքնազո՞յ ինքնանուն է»<sup>11)</sup>:

Դիմիսիոս Արիսապագուն (V դար) վերագրվող տեքստի՝ Ստեփանոս Սյունեցու (VIII դարի 20-ական թվ.) թարգմանության Հ-ի հետո կապված արտահայտությունները անզերեն լեզվով հրատարակությունում միանշանակ չեն թարգմանվել. և դրանով իսկ բնագրի մոտքի ընկալումը երկակի բնույթ է ստացել: «Ես եմ, որ Է» արտահայտությունը մի դեպքում թարգմանված է, «I am the one who is», իսկ մեկ այլ՝ «I am he who is»<sup>12)</sup>: Այզինչ, իմաստով այն համապատասխանում է Ս. Գրքի երրայերենից անզերեն թարգմանությանը՝ «I AM THAT I AM»<sup>13)</sup>, կամ հումարեն Թոթանասմիցի անզերեն թարգմանությանը՝ «I am THE BEING...»<sup>14)</sup>. Ստեփանոս Սյունեցու թարգմանության՝ «Ես եմ, որ Է» տողին հետևում է «կեանք, լոյս, Աստուած» արտահայտությունը, պահեն այստեղ աստվածային անվան այն բանաձևն է, որի հիմքում ընկած է Ս. Գրքի հայերեն թարգմանության «Ես եմ Աստուած, Որ Է» արտահայտությունը, որը արտացոլվել է Սուրբ Պատարագում. «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ, որ Է»<sup>15)</sup> Աստուած աստ բազմեցաւ...»:

Մովսես Խորենացու (V դար) «Պատմութիւն Հայոց» երկը սկսվում է Հայոց Մեծերի ՄԱՆԴԱՐԱԲԱՆՈՒԹՅԱՄ, որը արտացոլում է Հայոց ազգաբանության և տոհմաբանության հնագույն պատմության հենքը՝ խորհրդապաշտորեն ներկայացված Աստվածաշնչում բերված մարդկության ծննդաբանության տոհմածառին զուգահեռ, ինչը Պատմահոր շարադրանքում Աղամից հասնում էր մինչև նոյ և նրա որդի-

աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Երևան, 1957, էջ 112:

<sup>10</sup> Ես., ԽԲ 8, ԽԸ 12, 17:

<sup>11</sup> Եղիշեն, էջ 29-30, 109:

<sup>12</sup> The Armenian Version of the Works Attributed to Dionisius the Areopagite, translated by R.W. Thomson. - Corpus Scriptorum Christianorum Orientalium, Scriptores Armeniaci, tomus 18, Lovani, 1987, էջ 94, 96.

<sup>13</sup> Ex. III 14 (The Hebrew-English Old Testament, London, 1971).

<sup>14</sup> Exod. III, 14 (The Septuagint Version of the Old Testament, with an English translation, Michigan, 1970., p. 73).

Անրը՝ Սեմ, Քամ, Հաբեթ, և Վերջինիս սերունդներից մինչև Հայկ նահապետը և նրա հետնորդները<sup>15</sup>:

Մովսես Խորենացին Աղամից հետո անդրադարձել է նրա կրտսեր որդուց՝ Սեթից սերող տոհմածուղին, քանի որ, համաձայն Ս. Գրքի, մարդկային ցեղը շարունակվել էր, հատկապես Վերջինիս որդու՝ Ենովսի սերունդներով<sup>16</sup>: Ս. Գրքում Աղամից հետո պատմվում է Կայենի և Արելի, այնուհետև նրանց կրտսեր եղբոր՝ Սեթի և նրա որդու՝ Ենովսի մասին, որի մասին ասված է. «Նա յուսացաւ կոչել զանոն Տեառն Աստուծոյ»<sup>17</sup>:

Աղամից անմիջապես հետո Խորենացին գրել է ոչ թե եղբայրասապան Կայենի և Արելի, այլ Սեթի և Ենովսի մասին. «Աղամ նախատեղծ. սա կեցեալ ամս երկերիւ եւ երեսուն՝ ծնանի զՍէթ. Սէթ կեցեալ ամս երկերիւ եւ հինգ՝ ծնանի զԵնովս... Ենովս, որ առաջին յուսացաւ կոչել զԱստուծոյ»: Այստեղ, հեճանկարով Աստվածաշնչի վրա, Պատմահայրը հետևյալ իմաստավորումն է առաջարկել. «Եւ ընդէ՞ր արդեօք այս եւ կամ վասն որո՞ց պատճառանց նախ սա յուսացեալ կոչելոյն զԱստուծոյ, եւ կամ որպէ՞ս կոչելոն իմանի»: Հիշատակելով Աղամին և Արելի՛ Խորենացին գրել է. «Արդ՝ սոցա այսպէս լընդունելութիւն եւ ի ծանօթութիւն Աստուծոյ լեալ՝ ընդէ՞ր առաջին սա ասի կոչել զԱստուծոյ, եւ այս՝ յուսով»:

Պատմահայրն այս աղիթով չի բերել «անուն» բառը իր շարադրանքում, և նրա երկի քննական բնագրի ձեռագրական հիմքը առիթ չի տալիս կասկածելու այդ նախադասության աղիթով: Այնինչ, «Պատմութիւն Հայոց»-ի թարգմանիչները տարբեր մոտեցումներ են ցուցաբերել այս և նույնանման արտահայտությունների մկանմամբ:

Մովսես Խորենացու երկի ոուսերեն լեզվով առաջին հրատարակությունում խնդրու առարկա նախադասության մեջ ավելացված է «անուն» բառը. «Енос первыйй возимел упование призывать имя Бого», իսկ շարունակությունում պահպանվել է հարազատությունը բնագրի («նախ սա յուսացեալ կոչելոյն զԱստուծոյ», «առաջին սա ասի կոչել զԱստուծոյ, եւ այս՝ յուսով», «կոչէ զԱստուծոյ»<sup>18</sup>) հետ («первыйй привзвал Бога, он первыйй привзвал Бога и то с упоманием», «привзывает Господа»<sup>19</sup>): «Պատմութիւն Հայոց»-ի ոուսերեն լեզվով նոր թարգմանությունում առաջին և հաջորդ հատվածներում ավելացված է «անուն» բառը. «Енос был первым,

<sup>15</sup> Մովսես Խորենացի. Պատմութիւն Հայոց, Երևան, 1991, էջ 14-19:

<sup>16</sup> Մովսես Կաղամկատվացին, իմաշնեւ և Մովսես Խորենացին. Աղամից անմիջապես հետո գրել է Սեթի և նրա որդու՝ Ենովսի մասին (Մովսես Կաղամկատուացի. Պատմութիւն Աղուամից աշխարհի. քննական բնագիրը և ներածութիւնը՝ Վ. Առաքելյանի, Երևան, 1983, էջ, էջ 3):

<sup>17</sup> ՄԱՅԻ., Դ 26, Ե 1-5:

<sup>18</sup> Մովսես Խորենացի, էջ 14, 15:

<sup>19</sup> История Армении Монсея Хоренского, новый перевод Н. О. Эмина, М., 1893, с. 6.

кто с упоманием призывал имя Бога... Он первый уповал на призвание имени Бога", "...призывает имя Бога"<sup>20</sup>.

Նման ավելացումները չեն նպաստում Խորենացու շարադրանքի մեկնողական բնույթ ունեցող մի ամրող պարբերության ճշգրիտ թարգմանությամբ, քանզի Աստվածաշնչի վու հիմնված այդ տողը Խորենացին հետևյալ կերպ է իմաստավորել. «Եւ ընդէ՞ր արդեօք այս եւ կամ վասն որո՞ց պատճառամաց նախ սա յուսացեալ կոչելոյն զԱստուած, և կամ որպէ՞ս կոչելն իմանի»: Հիշատակելով Ադամին և Արեիհա՛ Խորենացին գործ է. «Արդ՝ սոցա այսպէս յընդունելութիւն եւ ի ծանօթութիւն Աստուծոյ լեալ՝ ընդէ՞ր առաջին սա ասի կոչել զԱստուած, եւ այս՝ յուսով»<sup>21</sup>:

Մովսես Խորենացին այն կարծիքին էր, որ Ադամը «ի պատուիրանազանցութեան գոտեալ առաջինն ի մարդկամէ՝ ի դրախտէն եւ յԱստուծոյ, չարին աղազա, որպէս ասացեալ է, գտանի արտասահմանեալ», իսկ Արելի մասին գործ է. «Զկնի եւ ընտանեզոյնն Աստուծոյ յորդոցն Ադամայ՝ ի հարազատէն իւրմէ սպանանի յեղօրիէ»: Նկատի ունենալով Արելի սպանությանը հաջորդած խառը ժամանակները, երբ տեղի ունեցավ Կապեանի սերունդներից Ղամեքի ներազործությունը<sup>22</sup>, Խորենացին, առանց անուններ հիշատակելու, գործ է. «Թես որոյ ոչ բամի ինչ աստուածայնոյ եւ ոչ յայտնութեան ինչ իրիք եղելոյ, ի տարակուսան եւ յանուսութիւն ազգ մարդկան հատեալ լինի, այլ եւ յինքնարհանոյ արդարեւ գործ»: Մեթի որդի Ենովսն էր «քաջայու եղեալ ուղղութեամբ հանդերձ կոչել զԱստուած»:

Մովսես Խորենացին հենավէլ է Աստվածաշնչի վերոբիշյալ տողի վրա, քանզի իր մեկնության մեջ օգտագործել է հենց «անուանել» բառը. «Իսկ կոչելոյ կրկնակի իմանի, կամ անուանել որպէս զմոռացեալ, կամ յօգնականութիւնն կարդալ: Արդ՝ անուանելն որպէս զմոռացեալ՝ ոչ է ի դէպ, զի ոչ բազմութիւն ամաց ընդ մէջ անցեալ, որ ի մոռացումն նոցա զԱստուածոյ ամէք զանում եւ կամ զնոյն ինքն՝ որոյ անունն եւ ոչ դարձեալ մահու եւ թաղման դեռ են յԱստուծոյ ստեղծեալն հասեալ էր»<sup>23</sup>:

Այս միտքը նույնպես թերի է Անրկայացված ուստի թարգմանություններում. "... Не так же много прошло времени, чтобы люди могли забыть имя Бога, или его самого",<sup>24</sup> "... Не так уж много прошло времени, чтобы было позабыто имя Бога или сам носитель этого имени"<sup>25</sup>: Այնինչ հայերեն գրաբար բնագրի խնդրո առարկա արտահայտությունը ամերաժեշտ է թարգմանել՝ "... имя Бог":

Խորենացու բնագրի վերոբիշյալ նախադասություններին հիմնականում հարազատ են աշխարհաբար [«Ենովսը առաջինն եղավ, որ հուսաց Աստծուն

<sup>20</sup> Մօվսես Խօրենաց, История Армении, перев. Г. Саркисяна, Ереван, 1990, с. 9-10.

<sup>21</sup> Մովսես Խորենացի, էջ 14-15:

<sup>22</sup> Մամ. Դ. 23:

<sup>23</sup> Մովսես Խորենացի, էջ 14-15:

<sup>24</sup> История Армении Моисея Хоренского, новый перевод Н. Эмина, р. б.

<sup>25</sup> Մօվսես Խօրենաց, перев. Г. Саркисяна, с. 10.

կոչել», «...սա առաջինը հուսաց Աստծուն կոչել», «...առաջինը մա Աստված անվանեց (բնագրի ավելի ճիշտ թարգմանությունն է՝ «կոչեց Աստված» - Է. Դ.) և այն էլ՝ հուսով», «Արդ՝ անվանել հասկանալը, ինչպես մոռացվածի, հարմար չէ, որովհետև այնքան շատ տարիներ չէին անցել, որ Աստված անունը նրանց մոռացվել տային կամ հենց նրան, որ այս անունով կոչվում էր»<sup>26</sup> և անգլերեն («Enos was the first who had hope to call on God», «... was he the first to have hope to call upon God...», «... the first to call upon God, and that with hope», «Now the naming as of something forgotten is inappropriate here, for there had not passed a great number of years that would have led them to forget the name God or Him whose name it is»<sup>27</sup>) թարգմանությունները: Ֆրանսերեն թարգմանությունում ևս խնդրու առարկա արտահայտության կապակցությամբ, բացի վերջին դրվագից [ուր թարգմանված է. «... le nom de Dieu ou l'etre même designe par se nom»<sup>28</sup> (այնինչ պետք է լինի «... le nom Dieu...»)], պահպանվել է հարազատությունը բնագրի հետ:

Մովսես Խորենացուն պետք է հայտնի լիներ հումարեն Յոթանասից և հայերեն գրաբար թարգմանությունների ոճական տարբերությունը երրայերեն տեքստից: Ըստ Աստվածաշնչի 1895 թ. հրատարակության մի տողատակում երրայերենից հայերեն կատարված թարգմանության, «Յայնժամ սկիզբն եղեւ կոչելոյ յանուն Տեառն»<sup>29</sup>, այնինչ հիմնական տեքստի հայերեն թարգմանությունը՝ «Նա յուսացա կոչել զանուն Տեառն Աստուծոյ»<sup>30</sup> բառացիորեն համապատասխանում է հումարեն տեքստի բովանդակությանը<sup>31</sup>: «Սկիզբն եղեւ» և «հուսացաւ» արտահայտությունների տարբերությունը խնդրու առարկա հարցի առողմով առավել ընգածվում է նրանով, որ Խորենացին իր մեկնությունում հենվել է երկրորդի վրա:

<sup>26</sup> Մովսես Խորենացի, աշխ. թարգմ. Խ. Մալխասյանի, էջ 12-13:

<sup>27</sup> Moses Khorenatsi, p. 71-72.

<sup>28</sup> Moïse de Khorenene. Histoire de l'Armenie. Nouvelle traduction de l'arménien classique par Annie et Jean-Pierre Mahe (d'après Victor Langlois) avec une introduction et des notes, Gillimard, 1993, p. 108-109.

<sup>29</sup> Աստուծաշնչ մատեան Հին և Նոր Կտակարանաց, ըստ ճշգրիտ թարգմանութեամ հայմեաց մերց համեմատութեամբ երայական և յունական բնագրաց. Կոստանդնուպոլիս, 1895, էջ: Հմտ. «Тогда начали призывать имя Господа [Бога]», п.л.с. Библия. Книга Священного Писания Ветхого и Нового Завета, М., 1976, Быт. 4. 26. "Then began men to call the name of the Lord", Gen., 4. 26 (The Holy Bible, Authorized King James Version,, London and New York,1957): Անգլերեն թարգմանության մի ընթերցվածի համաձայն. "Then began men to call themselves by the name of Lord" (The Hebrew-English Old Testament, London, 1971).

<sup>30</sup> Ծըսդ, դ. 26:

<sup>31</sup> The Septuagint Version of the Old Testament, with an English translation, Michigan, 1970, Gen. IV 26.

Մովսես Խորենացին քրիստոնեական աստվածաբանության ոգով է մեկնել այս արտահայտությունը, հակառակ՝ հատկապես օտար գրականության մեջ տարբեր մեկնությունների, որոնք հաճախ բռնազրուի բնույթ ունեն<sup>32</sup>:

Մովսես Խորենացին գրել է. «Ապա ուրեմն յօդմականութիւն կոչէ սա (Ենովս - Է. Դ.) զԱստուած»<sup>33</sup>. Այսինքն, Սեթից սերած մարդկության սերումը հույս ուներ ապաշխարելու: Միսիթար Սասնեցին (XIII դ. 60-ական - 1337 թթ.) նովակես ոչ թե անվանակոչելու, այլ հուսալու իմաստով է մեկնել Աստծո անվան կոչելը<sup>34</sup>: Խնչակը Ս. Գրիգոր Տաթևացին է մեկնել՝ «Թոյսն է ակն Բաւատոյն»<sup>35</sup>:

Սեթի և նրա որդո՞ւ Ենովսի մասին իր «Արարածոց մեկնութեան» մեջ Եղիշեն գրել է. «Եւ բաժանեաց Բարձրեալն զազգս ամենայն ըստ թուոյ Բրեշտակաց Աստուծոյ, զի որպէս առ Սեթաւ և Ենովսաւ կոչեցան որդիք Աստուծոյ և աստ Բրեշտակը Աստուծոյ, մարդիկ պատզամատորք Աստուծոյ իմաստութեանն յուրվապատիկ իմաստութեանն սահման...»<sup>36</sup>:

Հին և Նոր Կտակարաններում Աստծո որդիների վերաբերող մոտեցումները տարբեր են, և Եղիշեի մեկնությունը նոյ լոյս է սփռում այդ հասկացության հոգևոր ընկալման վրա: Ըստ Հին Կտակարանի, նախաշրմեղելյան ժամանակներում «Ակսան մարդիկն բազմանալ ի վերայ Երկրի, և դատերք ծնան նոցա: Տեսալ որդուցն Աստուծոյ գրաւերս մարդկան, զի գեղեցիկ էին, առին իրենանց կանայս յամենցուոց, զոր ընտրեցին...: Եւ իրու եւեւ Տէր Աստուած, եթէ բազմեցան չարիք մարդկան ի վերայ Երկրի, և ամենայն ոք խորհիք ի սրտի իրում խնամով ի չարիս զամենայն աւուրս: Եւ ստրօցաց Աստուած, զի արար զմարդն ի վերայ Երկրի, և մտախոր եղել ի սրտի իրում: Եւ ասէ Տէր Աստուած. «Զնշեցից զամենայն մարմին, զոր արարի, յերեսաց Երկրէ, ի մարդոյ մինչեւ յանասուն...»<sup>37</sup>:

Աստծո որդիների մասին այստեղ խոսվում է Սեթից և Ենովսից մի քանի սերումը մետք՝ նետո՞՝ Նոյի և նրա որդիների Բիշատակման ժամանակաշրջանում: Ուրեմն ի՞նչը է Եղիշեին ոգեշնչել Աստծո որդիների Բիշատակման սկզբնավորումը կապված համարել Սեթի և Ենովսի ժամանակների մետք:

Ըստ Նոր Կտակարանի, Կայիշափա քահանայապետը մարզարեացավ «եթէ մեռուամելոց էր Թիսուս ի վերայ ազգին. և ոչ ի վերայ ազգին միայն, այլ զի և զորդիսն Աստուծոյ զցորուեալսն ժողովեսցէ ի մի»<sup>38</sup>:

<sup>32</sup> R. De Vaux. The Early History of Israel, London, 1978, p. 268, 338; Cook S., An Introduction to the Bible, New York, 1945, p. 136.

<sup>33</sup> Մովսես Խորենացի, էջ 15:

<sup>34</sup> Միսիթար Սասնեցի, Ա. 16:

<sup>35</sup> Գրիգոր Տաթևացի. Մեկնութիւն սահմոսաց, աշխատահրութեամբ Ա. Քյոշկերեանի, Երևան, 1993, էջ 69:

<sup>36</sup> Խաչիկյան Լ., Եղիշեի «Արարածոց մեկնութիւնը», Երևան, էջ 250:

<sup>37</sup> ՄԱԱ. Զ 1-7:

<sup>38</sup> Թովհ. ԺԱ. 52:

Այս հոգիշնկալման բանալին Քրիստոսի խոսքն է. «Որդիք աշխարհիս այսորիկ կանայս առնեն և արանց լինին, իսկ որ արժանի լինիցին այնմ աշխարհի հասանել և յարութեամն որ ի մեռեղոց՝ ոչ կանայս առնեն, և ո՛չ արանց լինին: Քանզի և ոչ մեռանել եւս կարեն, զի հաւասար հրեշտակաց են, և որդիք Աստուծոյ, քանզի յարութեան որդիք են»<sup>39</sup>: Ուրեմն, Եղիշեն Նոր Ովասի ոգով է մեկնել Աստծո որդիների մասին հոգիշնկալումը Սեղի ու Եմովսի առումով:

Եղիշեն «Արարածոց մեկնութեան» և «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկերը մերձված են Աստծո որդիների մասին քրիստոսաբանական ընկալումով. «Մանկունք, մի ոք զծեզ խարեսցէ, որ առնէ զարդարութիւն, արդար է՝ որպէս և նայն արդար է: Եւ որ առնէ զմեղս, ի սատանայէ է, զի ի սկզբանէ սատանայ մեղանչէ. վասն այսորիկ յայտնեցաւ Որդին Աստուծոյ, զի լուծցէ զգործս սատանայի: Ամենայն, որ յԱստուծոյ է ծնեալ, մենու ոչ առնէ, զի սերմն նորա ի նմա մնայ, և ոչ կարէ մեղանչել, զի յԱստուծոյ է ծնեալ: Այսուիկ յայտնի են ի միմեանց որդիք Աստուծոյ և որդիք սատանայի»<sup>40</sup>, քանզի խավարի ուժերը մարմնավորող թշնամու դեմ (որպիսին այն ժամանակ մազդեզականության պարտադրումն էր հայերին սասանյան արքունիքի կողմից) մղվող կոհիվը ոչ միայն նյութական, այլև հոգևոր ոլորտներն էր ընդգրկում:

Հովսեփ Ա. Հողոցմեցի Կաթողիկոսի (437-452 թթ.) առաջնորդությամբ Այրարատյան զավառում Արտաշատում ժողոված Տարոնի Սահմակ, Մանազկերտի Մելետ, Բագրևանդի Եղմիկ, Բգնումյաց Սուրմակ, Տայոց Տաճառ, Բասենի Թաթիկ, Տուրութեանի Քասու, Մարդաստանի Երեմիա, Մարդարկո Եվդադ, Սյունյաց Անամիա, Արծրումյաց Մուշե, Ռշտումյաց Սահմակ, Մոկաց Բասիլ, Վանանդի Գաղ, Ամատումյաց Եղիշա, Անձնացյաց Եղբայր, Ապահումյաց Երեմիա Եպիսկոպոսները իրենց պատասխան համակում խիզախորեն մերժեցին սասանյան արքա Հազկերտի պահանջը՝ ուրանալ և ընդունել մազդեզականությունը<sup>41</sup>: Այնքան խորն էր Հայ Առաքելական Եկեղեցու հայութի մեջ լուսավոր հավատքը, որ նրանք առանց վարանելու ուղղակի հոգևոր մարտարավեր նետեցին մազդեզականությունը շատագովող արքային. «Այլ դու յետ այսր ամենայնի այլ զմեզ մի հարցաներ, զի ոչ եթէ ընդ մարդոյ է ովստ հաւատոց մերոց, եթէ պատրիցիմք իբրեւ զտղայս, այլ անլուծութեամբ ընդ Աստուծոյ, որում չիք հնար քակտել և ի բաց եղանել, ոչ այժմ և ոչ յապա, և ոչ յախտեանս, և ոչ յախտենից յախտեանս»<sup>42</sup>:

Վազ միջնադարյան հայ պատմիչների շարքում Սոլլը Երրորդության մասին իր աստվածաբանական խորիդազգացություններով նշանակալից տեղ ունի Մովսես Կաղամկատվացին (VII դար), որը, մեկնողական ոճով հենվելով Նոր Կտակարանի

<sup>39</sup> Ղուկ. ի 34-36:


<sup>40</sup> Ա. Թով. Գ 7-10:

<sup>41</sup> Եղիշե, էջ 37:

<sup>42</sup> Նոյմ տեղում, էջ 41:

վրա<sup>43</sup>, գրել է. «... զանձառելի Երրորդութեանն զմի արարչական զօրութիւնն... Արդ՝ բան առ բան բազմատրական և հատու պատասխանեօք զլոյսն առ խաւար ծաներուք խորագոյնս քննելով. և դո՛ բարեաց ցանկացողի, վերացը՝ ընդ իս սրագոյն զհայեցուածս ի սահմանս սրբոյ Երրորդութեանն, զոր Պողոս վարդապետէ առ հոռմայեցիսն. «Աղաչեմ զձեզ. ասէ. ի ձեռն տեսան թիսոս Քրիստոսի և սիրով հոգուն պատերազմակից լինել ինձ յաղօթս առ Աստուած, եթէ Աստուած է Տէր թիսոս Քրիստոս և Սուրբ Հոգին»<sup>44</sup>: Այնութեևն շարունակությունում կարդում ենք. «Այս պէս ուսուցեալ զանուն Սուրբ Երրորդութեանն և զրէ իսկ, թէ ամենայն առաքելական Կտակարանքն լի են այսու բարբառով, յոր անուն մեք հրաման առաք մկրտել եւ փառս վայելել միով երկրպագութեամբ»<sup>45</sup>:

Այսպիսով, Ընդհանրական և Առաքեական Եկեղեցու՝ Տիեզերական առաջին երեք ժողովների (Նիկիա՝ 325 թ., Կոստանդնուպոլիս՝ 381 թ., Եփեսոս՝ 431 թ.) ընդունած քրիստոնեական վարդապետության վրա հիմնված հայ քրիստոսարանության ընկալմամբ Աստծու անունն է Աստված՝ Սուրբ Երրորդության Միաբան Էությամբ և որևէ շեղում ճշմարիտ հավատի աստվածաշտությունից և դրա վրա հիմնված քրիստոսարանությունից լի է հոգևոր բնագավառում կորստի և ապազայնացման Վտանգով:



<sup>43</sup> Հռոմ. ԺԵ 30-31:

<sup>44</sup> Մովսես Կաղանկատվացի, էջ 38, 278:

<sup>45</sup> Նուզը, էջ 278: